

ՍՍՌՄ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՍՍՌՄ Ներքին գործերի մինիստրու-
թյունը ուշադիր կերպով ստուգեց
վնասարարության, լրտեսության մեջ
և Սովետական պետության ահտիվ
գործիչների նկատմամբ տեղորիստա-
կան գործողությունների մեջ մեղա-
դրված բժիշկների խմբի գործի նախ-
նական քննության բոլոր նյութերը և
մյուս տվյալները:

Ստուգման հետևանքով պարզված է,
որ այդ գործով պատասխանատու-
թյան կանչված պրոֆեսոր Մ. Ս. Վոլ-
սին, պրոֆեսոր Վ. Ն. Վինոգրադովը,
պրոֆեսոր Մ. Բ. Կոզանը, պրոֆեսոր
Բ. Բ. Կոզանը, պրոֆեսոր Պ. Ի. Եգո-
րովը, պրոֆեսոր Ա. Ի. Ֆելդմանը,
պրոֆեսոր Յա. Գ. Էտինգերը, պրոֆե-
սոր Վ. Խ. Վասիլենկոն, պրոֆեսոր
Ա. Մ. Գրինշտեյնը, պրոֆեսոր Վ. Յ.
Զելենիեը, պրոֆեսոր Բ. Ս. Պրեոբրա-
ժենսկին, պրոֆեսոր Ն. Ա. Պոպովան,
պրոֆեսոր Վ. Վ. Զակուսովը, պրոֆե-
սոր Ն. Ա. Շերեշևսկին, բժիշկ Գ. Ի.
Մայորովը ՍՍՌՄ Պետական անվը-
տանգության նախկին մինիստրության
կողմից ձեռքակալվել էին սխալ կեր-
պով, առանց որևէ օրինական հիմքի:

Ստուգումը ցույց տվեց, որ թվարկ-
ված անձանց դեմ առաջ քաշված մե-
ղադրանքները կեղծ են, իսկ փաստա-
կան տվյալները, որոնց վրա հենվում
էին քննության աշխատողները, ան-
հիմն են: Պարզված է, որ ձեռքակալ-
վածների ցուցմունքները, որոնք իբր

հաստատում էին նրանց դեմ առաջ
քաշված մեղադրանքները, Պետական
անվտանգության նախկին մինիստրու-
թյան քննչական մասի աշխատողների
կողմից ստացվել են քննության այն-
պիսի եղանակներ կիրառելու միջոցով,
որոնք անթույլատրելի են և խստիվ
արգելված սովետական օրենքներով:

Այդ գործը ստուգելու համար ՍՍՌՄ
Ներքին գործերի մինիստրության կող-
մից հատկապես առանձնացված քննչ-
չական հանձնաժողովի եզրակացու-
թյան հիման վրա ձեռքակալվածներն
Մ. Ս. Վոլսիին, Վ. Ն. Վինոգրադովին,
Բ. Բ. Կոզանին, Պ. Ի. Եգորովին,
Ա. Ի. Ֆելդմանին, Վ. Խ. Վասիլենկո-
յին, Ա. Մ. Գրինշտեյնին, Վ. Յ. Զելե-
նիեին, Բ. Ս. Պրեոբրաժենսկուն, Ն. Ա.
Պոպովային, Վ. Վ. Զակուսովին, Ն. Ա.
Շերեշևսկուն, Գ. Ի. Մայորովին և այդ
գործով պատասխանատուության կանչ-
ված մյուս անձանց վնասարարական,
տեղորիստական ու լրտեսական գոր-
ծունեության մեջ ներկայացված մե-
ղադրանքները լիովին հերքված են և,
ԻՍՅՍՌ Քրեական-Դատավարական
օրենսգրքի 4-րդ հոդվածի 5-րդ կետին
համապատասխան, նրանք կալանքից
ազատված են:

Քննությունը սխալ վարելու մեջ մե-
ղավոր անձինք ձեռքակալված են և
կանչված քրեական պատասխանա-
տուության: